

ՍՈՆԱ ԻՇԽԱՆՅԱՆ

Խորհրդի անկախ անդամ

Աուդիտի հանձնաժողովի անդամ



Սոնա Իշխանյանը ծնվել է 1978 թվականի նոյեմբերի 19-ին: Ազգությամբ հայ է:

Հիմնական պաշտոնները

- Խմբի աուդիտի տարածաշրջանային ղեկավար ProCredit Holding AG & Co. KgaA-ում (2011 թվականից մինչ այժմ)
- Աուդիտի հանձնաժողովի նախագահ/անդամ տարբեր ժամանակահատվածներում ՊրոԿրեդիտի Բանկերում (Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի և Մոլդովայի)
- ՊրոԿրեդիտ Հոլդինգի Խմբի Աուդիտի ներկայացուցիչ բանկերի Աուդիտ և Ռիսկերի Կոմիտեներում

Կրթությունը և փորձը

Սոնա Իշխանյանը մագիստրոսի կոչում է ստացել բիզնեսի կառավարման ոլորտում՝ ԱՄՆ-ի Նեբրասկայի համալսարանում (2004–2005), և բակալավրի աստիճան՝ հաշվապահություն և աուդիտ մասնագիտությամբ՝ Երևանի Պետական Տնտեսագիտական Համալսարանում (1995–2000):

Սոնա Իշխանյանը ավելի քան 24 տարվա մասնագիտական փորձ ունի ներքին աուդիտի, ձեռնարկությունների ռիսկերի կառավարման և ֆինանսական ծառայությունների ոլորտներում: Նա ավելի քան 13 տարի աշխատել է որպես աուդիտի հանձնաժողովների նախագահ և անդամ՝ Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի և Մոլդովայի ՊՐՈԿՐԵԴԻՏ բանկերում: Նրա մասնագիտական գործունեությունը ներառում է 18 տարի ներքին աուդիտի և ռիսկերի կառավարման ոլորտում, ինչպես նաև 4 տարվա փորձ Deloitte & Touche LLP (Սան Ֆրանցիսկո, ԱՄՆ) ընկերությունում:

Իր աշխատանքային գործունեության ընթացքում Սոնա Իշխանյանը ձեռք է բերել մեծ փորձ SOX համապատասխանություն, ներքին աուդիտի

մեթոդաբանություն մշակելու, ֆինանսական հաշվետվություն կազմելու, բիզնես գործընթացների գնահատման և միջգործառնական միջազգային կառավարման ոլորտներում:

Սոնա Իշխանյանը Ակբա բանկի խորհրդի անդամ է ընտրվել բաժնետերերի 2025 թվականի մայիսի 29-ի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ:

Բանկի խորհրդի 2025 թվականի հուլիսի 11-ի նիստով Սոնա Իշխանյանը նշանակվել է Աուդիտի հանձնաժողովի անդամ և նախագահ: Աուդիտի հանձնաժողովի նախագահ է հանդիսացել մինչև 2026թ. ապրիլ:

Խորհրդի 2026թ. ապրիլի 13-ի որոշմամբ Սոնա Իշխանյանը նշանակվել է Խորհրդի նախագահ: